ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2024 թվականի N 1582-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 57-րդ և 57.1-ին կետերի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) սույն որոշման հավելվածում ներառված շինարարական աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրերով (համաձայնագրերով) (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում կապալառուի նկատմամբ հաշվարկված (հաշվարկվող) տույժերի (այսուհետ՝ տույժեր) համար պայմանագրով սահմանել հետևյալ պայմանները՝

1) տույժերը պակասեցվում են կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից՝ պայմանով, որ սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետի պահպանման դեպքում պահված տույժերը վճարվում են կապալառուին:

Կապալառուի կողմից սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետը չպահպանվելու դեպքում պահված տույժի գումարները վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես կատարողականների դիմաց վճարված գումարներից հաշվանցված միջոցներ.

2) տույժերը չեն պակասեցվում կատարողականների դիմաց կապալառուին վճարվող գումարներից, եթե կապալառուն ներկայացնում է այդ գումարի չափով բանկային երաշխիք: Բանկային երաշխիքը պետք է լինի անհետկանչելի և ուժի մեջ լինի սույն որոշման հավելվածում նշված վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված երեսուն աշխատանքային օր:

2. Սույն որոշման հավելվածում նշված պայմանագրերի համար պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ամբողջ ծավալի ավարտ է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների ընդունումը (Ավարտված շինարարական աշխատանքներն ընդունող հանձնաժողովի ակտի հաստատումը):

3. Կոմիտեին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ապահովել սույն որոշման հավելվածում նշված պայմանագրերում սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ կատարելու մասին համաձայնագրերի կնքման գործընթացի իրականացումը:

4. Սույն որոշման դրույթները տարածվում են 2024 թվականի հուլիսի 10-ից հետո կոմիտեի կողմից ընդունված կատարողականներից պահված տույժերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ